

**ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԾՆՆԴՅԱՆ  
ՀԻՍՈՒՆԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ  
ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ  
ԷԶՄԻԱԾՆՈՒՄ**

Հորեյանազարդ այս տարվա օգոստոսի 21-ը մի նոր, առավել տոնակամ, համազգային շուքով նշվեց Մայր Աթոռում, քանզի Ամենայն Հայոց Հայրապետը բոլորեց իր հիսուներորդ տարեդարձը:

Վեհափառ Հայրապետը 50 տարեկան է:

Դեռ վաղ առավոտից արտասովոր եռուզեռ էր Մայր Աթոռում, աշխուժություն և ուրախություն էր տիրում ամեն տեղ, ամենքի դեմքին զգալի էր ցնծության մի փայլ, որը տարբեր էր դարձնում այդ օրը սովորական յուրաքանչյուր օրվանից, բոլորը անխտիր՝ հոգևորական թե հավատացյալ, փայլում էին ուրախության ու գոհունակության մի այլ զգացումով, որովհետև յուրաքանչյուրն առիթը պիտի ունենար անձնապես շնորհավորելու, իր սրտի զգացումները փոխանցելու Նորին Սրբությանը, ինչպես նաև ստանալու Վեհափառ Հայրապետի օրհնությունը:

Այս առիթով հանդիսությունը սկսվեց առավոտյան ժամը 10-ից, երբ Վեհափառ Հայրապետը «Հրաշափառ»-ի երգեցողության հնչյունների ներքո մուտք գործեց Մայր Տաճար, ուր կատարվեց Հայրապետական մաղթանք: Մեկ անգամ ևս բոլոր ներկաները աղոթք բարձրացրին առ Աստված՝ «Աստվածակառույց և անհաղթելի Մեծ Աթոռի հաստատունության, անասանության», ինչպես նաև Նրա արժանավոր Գահակալի՝ «համերամ ժամանակօք ապահով անդորրութեան» համար: Հայրապետական մաղթանքի ավարտին վանքի երիցագույն միաբան Տ. Հուսիկ արքեպս. Սանթրությանն իր և բոլոր ներկաների անունից շնորհավորեց Վեհափառ Հայրապետին՝ բարձրորեն գնահատելով Վեհափառ Հայրապետի հոգևորական գործունեության շրջանը, և այն որակեց որպես եկեղեցաշինության ու հոգևոր վերարթնության ժամանակահատված մեր Եկեղեցու և ողջ ժողովրդի համար:

Ամբողջ օրը մարդաշատ էր Մայր Աթոռը թե՛ հավատացյալներով և թե՛ պաշտոնական պատվիրակություններով: Յուրաքանչյուրի փափագն էր զոնե մի համեստ աջահամբույրով իրենց սերն ու նվիրումը հայտնել Վեհափառ Հայրապետին՝ մի նոր ուրախության առիթ տալով Նորին Սրբությանը: Հոսքը դեպի Վեհարան շարունակվում էր ողջ օրվա ընթացքում, և այնտեղից վերադարձող յուրաքանչյուրի դեմքին փայլող ժպիտից կարելի էր ենթադրել, որ անմիջաբար Վեհափառ Հայրապետի ընդունելությանն և խոսքին է արժանացել:

Հանդիսության պաշտոնական արարողությունը սկսվեց ժամը 17.00-ին, Վեհարանի հանդիսությունների դահլիճում: Հայաստանի Հանրապետության հիմնից և Տերունական աղոթքից հետո բացման խոսքով հանդես եկավ օրվա հանդիսավարը՝ Տ. Հովնան արքեպս. Տերտերյանը.

*«Վեհափառ Տեր.*




ՆԱԿԻՍԱՐԱՆՈՒՄ



ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ Ա. ԷԶՄԻԱՇՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ




1700-ԱՄՏԱԿԻ ՆԱԿԻՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՄԵՆԱԿԻ ՎԱՐՈՉ-ՔԱՐՏՈՒՐԱՆ  
Տ. ՆՈՒՆԱՆ ԱՐՔԵՐԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՑՄԱՆ ՀՆՈՐԱՎԱԿՈՒՄԱՆ ԽՈՍՔ ԱՄԵԼԻՍ






ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԵՏ ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆԸ  
ՇՆՈՐԱՎՈՐԱԿԱՆ ԽՈՍՔԻ ԱՍԵԼԻՍ





ՄԱՐԿՆԱԳՐՈՒՄԻ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԳՐԳԻԿ ՆԱՐԻԻՅԱՆԻՆԵՐԸ  
ՇՆՈՐԱՎԱԴՐՈՒՄԻ ԽՈՍՏՔ ԱՄԵՆԻՍԻ



ԱՂԵՏՄԱՆ ԱՆԱՏՈՒԻ ԴՐՅՈՒՅՈՒՄԸ ՆԻՇԱՆՏԵՆԻ ԽՈՍԹԱՆԵՆԻՍ

Այս երեկո բոլորեքյան հավաքված ենք այստեղ՝ տոնելու համար Ձեր ծննդյան 50-ամյակը և աղոթք բորձրացնելու առ Աստված գոհաբանական մաղթանքով, քանզի Ձեր կյանքի տարիները Դուք ընծայաբերած եք Աստուծո՝ յոթ խորհուրդներով խմորված:

Հայոց Եկեղեցին, որուն առջև ծառայած՝ լույսի ճանապարհն եք որոնած ու այդ լույսին առաջնորդությամբ հասած եք Ս. Էջմիածին և Ավիրական այս հողին վրա կանգնած՝ Ձերո՞ Սրբության Էության մեջ թրծած եք նոր պատգամ մեզի ու զայիք սերունդներուն:

Հավատքի անասան վեմ, առաքելահաստատ Հայոց Եկեղեցին հայ հոգու ծննդավայրն ու պատվարն է, փրկության տապանը, որ Ավետարանի լույսով ու հայրենի ավանդներով սնում, նորոգում ու զորացնում է ազգային մեր կյանքը, կերտում միության մեր տաճարը: Հավատք, որը դրսևորված է Ձեր հովվական կյանքով ու այսօր կշարունակեք դրսևորել նոր իրագործումներով, որպես Հայրապետ Հայոց՝ եղած է Ձեր հոգևոր կյանքին մղիչն ու շարժիչը:

«... չկա՛ մեզ մահ, քանի դեռ մեր գործերուն ապրում է մեր հավատը, քանի դեռ հայոց պատմության ընթացքով հաղթականորեն անցնում է լուսեղեն թափորը Հայ Եկեղեցու՝ ճառագելով հավատք ու խմորելով հոգի, հավատարմորեն պահելով մեր ժողովրդի ընթացքը դեպի Աստված»:

Քրիստոնեությունը պատգամած եք որպես կյանքի ճանապարհ, որը ինչքա՛ն հստակ ու խորը կերպով հաղորդած եք. «Քրիստոսի խաղաղությունը, որը համակ սեր է, լույս և հավատք, անենք վեմ է մարդկային կյանքի կայուն և համապարփակ խաղաղության, այն վեմը, որի վրա «ողորմութիւն եւ ճշմարտութիւն պատահեցցին, արդարութիւն եւ խաղաղութիւն համբուրեցցին»:


Հայ ժողովուրդ, որուն ծառայելու պատիվը դարձուցած եք նաև հաղորդություն նորահաս մեր սերունդին, և այդ նույն կրակով լեցուցած հոգիները մանավանդ արտաշխարհ ապրող մեր ազգի զավակներուն, որով Հայոց Հայրապետի անձին մեջ կտեսնեն անձնավորումը Հայրենիքին ու Ս. Էջմիածնին, գերագույն այն խորհուրդները, որոնք մեր կյանքի սրբություններն են:

«Մեր ժողովուրդը աղոթքով կարող է հրաշքներ գործել»:

«Հավատես եմ որպես Հայոց Հայրապետ: Հավատում եմ մեր ժողովրդի ստեղծարար ուժին, հանճարեղ մտքին ու կառուցող բազուկին, հպարտ եմ նրա կենսահաստատ ոգով, զոհաբերելու, համբերելու, հաղթահարելու և հաղթելու կամքով, լի եմ մխիթարությամբ, քանզի նեղությունների և հոգսերի մեջ լցված ենք հույսով, և ամուր է զայիքի հանդեպ մեր հավատը՝ խարսխված աստվածային սիրույն, որ «ոչ երբէք անկանի»:

Հոգևորականի կոչումը, որ ծնած է Ձեզ հետ, և որը նոր ծնունդներ կապրի այսօր նորահաս հոգևորականներու հոգիներուն մեջ, և որուն հրավերն ու կոչը կկարդաք անխտիր բոլորիս:

«... Հոգևորականաց առաքինությունը առավել դժվարին է ներկայիս նյութապաշտ և աշխարհայնացած կյանքի պայմաններում, քանզի կոչված ենք մեր անձը



օրինակ դարձրած՝ անձնականը սուգած անանձնական մեր ձգտումներում ու տեսիլքներում, Ավետարանի կենսապարզ և խոսքին հավատարիմ պահել մեզ վստահված Քրիստոսի հոտը»:

Հայրենիք, որը լույս տարք ու նվիրական հող ըլլալեն անդին, դարձած է Ձեր կյանքի առաքելությունը, որուն հավատացած եք Ձեր իսկ բառերովը հաստատված այս խորիմաստ բանաձևումին մեջ. «Աստվածապարզ և հայրենիքը, երկնաշնորհ»:

Կյանք, որուն առջև խոնարհած եք որպես Աստուծո կողմն ընծայված մեծագույն պարզև: Բավական է լսել Ձեր այն խոսքը, որուն մեջեն կարձագանքն ձոր մարտահրավեր մը. «Մահ իմացյալ մահ է» կարգախոսը պիտի փոխվի մեր ժաղովորդի համար, այտուհետև պիտի ասենք. «Կյանք իմացյալ անմահություն է»:

Առ Աստված առաջնորդվելով, այս յոթ խորհուրդներուն մեջ հարածամորեն նորակնունք դարձող Հայրապետին ծննդյան 50-ամյակը կտոնենք այսօր: Ուրախության մեջ է այսօր Հայաստանյայց Առաքելական Եկեղեցվո մեծ ընտանիքը, քանզի տեսիլքով կըմբռնենք, որ նոր արշալույս մըն է բացված մեր կյանքի առջև, որուն խորհուրդը կխոսի ու կփայլի Ձերդ Վեհափառության անձին մեջեն: Ջերմ զգացումներով, բարի մաղթանքներով ուրախակից կդառնանք Ձեզի՝ Ձեր ծննդյան 50-ամյակի տոնական առթիվ, ու Ձեզի հետ միասին մենք ևս կնորոգվինք որպես հարազատ զավակները Հայաստանյայց Եկեղեցվո, որուն հայրն եք Դուք և այսօրվան փոխանցողը Լուսավորչի կանթեղի լույսին:

**Օրհնեցե՛ք մեզ, Վեհափառ Տեր»:**

Սրբազան Հոր բացման խոսքից անմիջապես հետո «Նարեկ» երգչախումբը, ղեկավարությամբ Մկրտիչ Մկրտչյանի, կատարեց Կոմիտասի «Ընտրեալդ Աստուծոյ» երգը: Այնուհետև հանուն միաբանության շնորհավորական խոսք ասաց Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը, որին հաջորդեց երգչախմբի «Սուրբ ես, Տեր» երգի կատարումը:

Ապա ՀՀ նախագահի շնորհավորական գիրն (տե՛ս էջ 9) ընթերցեց ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավար Արտաշես Թումանյանը: Ռուսաստանի Դաշնության նախագահի և Մոսկվայի ու Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսի Բ-ի շնորհավորական գրերը ընթերցեց ՀՀ-ում ՌԴ դեսպան Անատոլի Դրյուկովը: Համայն Վրաց Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Բ-ի շնորհավորական ուղերձն ընթերցեց Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը: Ծնորհավորական իր ուղերձն ընթերցեց ՀՀ վարչապետ տիար Անդրանիկ Մարգարյանը (շնորհակալական այս գրերը տե՛ս էջ 6-14): Այնուհետև ներկաներին իրենց կատարումներով մեծ հիացմունք պատճառեցին «Նոր անուններ» ծրագրի պատանի երաժիշտները՝ ղեկավարությամբ Սիլվա Մեքիճյանի: Իրենց սրտի զգացումներն ու շնորհավորանքի խոսքերն ասացին Սահմանադրական Դատարանի նախագահ տիար Գագիկ Հարությունյանը, 1700-ամյակի պետական հանձնաժողովի փոխնախագահ տիար Խոսրով Հարությունյանը, Ազգային Ակադեմիայի նախագահ տիար Ֆադեյ Սարգսյանը, Մետրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրեն ակադեմիկոս Սեն Արևշատյանը, Ռուսաստանի հայերի մի-

ության մախագահ տիար Արա Աբրահամյանը, Ռուսաստանի և Նոր Նախիջևանի թեմական խորհրդի փոխատենագետ տիար Գեորգի Տեր-Ղազարյանը: Ընթերցվեցին նաև Լեոնային Ղարաբաղի Հանրապետության մախագահ տիար Արկադի Ղուկասյանի, ՀՀ Ազգային ժողովի մախագահ տիար Արմեն Խաչատրյանի, Ռուսաստանի Դաշնության Հարավային մարզերում մախագահի ներկայացուցիչ տիար Կազանցևի, Սանկտ Պետերբուրգի մահաճգայետ տիար Յակովլևի, ինչպես նաև թեմակալ առաջնորդների և դիվանագիտական ներկայացուցիչների շնորհավորական գրերը:

Հավարտ հանդիսության վեհափառ Հայրապետն իր շնորհակալության և օրհնության խոսքն ասաց ներկաներին.

«Հարգելի ներկաներ. գիտեմ, ինչ է նշանակում այս շոգին մտել այս հարկի տակ մեկուկես և ավելի ժամ: Ցանկանում եմ իմ շնորհակալությունը և իմ գնահատանքը հայտնել ամենքիդ, որ ընդառաջել եք հրավերին այս հոբելյանական հանդիսությունը կազմակերպող հանձնաժողովի և եկել Ձեր հարգանքը, ձեր սերը մատուցելու Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Հայրապետին: Ես ուզում եմ առանձնահատուկ կերպով իմ շնորհակալությունը հայտնել Հայաստանի Հանրապետության Նախագահին իր ջերմ բարեմաղթանքների համար, Ռուսաստանի Դաշնության Նախագահ տիար Վլադիմիր Պուտինին, Նորին Սրբություն Ալեքսի Բ-ին, Նորին Սրբություն Իլիա Բ Կաթողիկոսին՝ իրենց եղբայրական ազնիվ զգացումի և ջերմ բարեմաղթանքների համար: Իմ խորին երախտագիտությունը բոլոր նրանց, ովքեր այստեղ ելույթ ունեցան, Հանրապետության վարչապետին, Սահմանադրական դատարանի մախագահին, 1700-ամյակի պետական հանձնաժողովի փոխմախագահին, Ազգային Ակադեմիայի մախագահին, Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրենին, մեր հոգևոր հայրերին և եկեղեցական վարչությանց ատենապետներին և բոլոր նրանց, ովքեր հեռագրերով, հեռախոսազանգերով իրենց բարի ցանկությունները փոխանցեցին մեզ 50-ամյա հոբելյանի առթիվ: Իմ գնահատանքն ու շնորհակալությունը գեղարվեստական խմբերին, որոնք իրենց գեղեցիկ կատարումներով ուրախացրին մեզ և մի որոշ պահ մոռացության տվեցին այս դահլիճի շոգը: Իմ շնորհակալությունը հոբելյանական հանդիսությունը կազմակերպող հանձնաժողովին՝ Հովհանն Սրբազանին, Արշակ Հայր Սուրբին և մնացյալ անդամներին: Հավանաբար մտածումը իրենց այն էր, որ այս հանդիսությունը շնորհավորանքների և բարեմաղթանքների փոխանցմամբ անդրադարձումի հրավիրեն Հայոց Հայրապետին Հայ Եկեղեցու առաքելությանը անհրաժեշտ աշխատանքների վերաբերյալ, որ այսօր ծառայել է Հայ Առաքելական Եկեղեցու առջև և պահանջում է իր անմիջական լուծումը, որպեսզի Հայ Եկեղեցին հայ ժողովրդի կյանքում լիարժեքորեն կարողանա իրականացնել իր առաքելությունը, իր պատմական առաքելությունը, որին անհա կոչված է հազար յոթ հարյուր և ավելի տարիներ: Հիսնամյա հոբելյանի այս հանդիսության առիթով, բնականաբար, հոգուս առաջին զգացումը, երախտագիտությունն է: Երախտագիտություն Երկնավոր իմ Հորը, որ կյանք է պարգևել ինձ և առաջնորդել հոգևոր ասպարեզ՝ ծառայելու իր հավատավոր, իր

ընտրյալ ժողովրդին՝ հայ ժողովրդին, որ նաև շնորհ է պարգևել ինձ ծառայության մեջ ուրախության զգացում մշտապես ունենալու, և ծառայության մեջ հոգնության զգացում չունենալու: Ես գոհություն, փառք եմ մատուցում Երկնավորին այս տոնի համար, որ կոչեց Մեզ հովվապետական ծառայության նոր հազարամյակ, որ արժանի դարձրեց Մեզ Հայրապետը լինելու հայ ժողովրդի, որ տոնում է մեծագույն հորեյլանը ազգային մեր կյանքի՝ 1700-ամյակը քրստոնեությունը Հայստանում պետական կրոն հռչակմամբ, նաև 10-ամյակը հայոց անկախ պետականության: Արդարև շնորհ է բացատրիկ, պարզ և մեծ, բայց նաև ծանր պատասխանատվություն: Հայոց Հայրապետ լինելու վճիռը, որ կայացվեց երկու տարի առաջ, երբեք չձևավորվեց Մեր անձի ու Մեր կարողությանց անկատմամբ վստահությամբ, այլ առավել չափով հայրապետության բարձր գաղափարի հանդեպ դրսևորած պատասխանատվության գիտակցմամբ: Մենք այս պահին որպես Հայոց Հայրապետ ուզում ենք խոնարհումով և աղոթքով վկայակոչել հիշատակը Եռաբլուրում հանգչող հերոսների, նաև ուզում ենք հիշել երանաշնորհ մեր երկու Հայրապետներին, որոնց առաքելության և գործի շարունակողն ենք կոչված լինելու: Սիրելիներ, Մենք գիտակցում ենք, թե Մեր կյանքի ներկա պայմաններում ինչ դժվարին առաքելություն է վիճակված Հայ Առաքելական Եկեղեցուն, բաց ես այստեղ պիտի չփորձեմ և պիտի չցանկանան ներկայացնել Մեր այն բոլոր ծրագրերը, որ փայտալույս ենք մեր հոգում՝ Հայ Եկեղեցին ծառայության մեջ գորացնելու, որպեսզի գորավիզ դառնա հայրենի մեր պետությանը Հայոց աշխարհի շենացման, մեր ժողովրդի բարօր ու երջանիկ կյանքի կերտման ճանապարհին: Մենք գիտենք, որ պարտավոր ենք արժևորելու այն հարգանքը, այն սերը, որին մեր հայրերի վաստակի համար արժանացել ենք Մենք այսօր: Հոյսը ծնվում ու գորանում է մեր Եկեղեցու փառավոր պատմության էջերից և հայրենիքի անկատմամբ ունեցած մեր անմնացորդ և անվերապահ սիրուց: Հայրենիքի սերը վեր է ամեն ինչից, հայրենիքի սերը կոչում է մեզ հանձնառության, կոչում է մեզ ողջերի ինքնագոհողության: Եվ մեր հայրերի լավագույն օրինակն ունենալով մեր առջև, անվերապահորեն ես հավատացած եմ, որ հայ եկեղեցականությունը պիտի քայլի այդ ճանապարհով, ստանձնած ամբողջական պատասխանատվությունը, ինչպես պատմության, այդպես էլ մեր ժողովրդի գալիքի առջև: Ես այս պահին հոգու պարտք ունեմ իմ երախտագիտությունը հայտնել մեր ժողովրդի գավակաց բոլորին անխտիր ի Հայաստան, Արցախ և ի Սփյուռու աշխարհի, որոնք իրենց անխտիր նվիրաբերումներով սատար են կանգնում մեզ, աջակից դառնում, որպեսզի շենանա հայրենին, որպեսզի գորանա Հայոց պետությունը, որպեսզի պայծառանա Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին: Արդ ձեռք ձեռքի սոված, միակամ և միասիրտ դառնանք ու շարունակենք լինել երաշխիքները մեր ժողովրդի հավերժության, մեր ժողովրդի ապահով գոյության: Իմ մաղթանքն է, որ մեր Երկնավոր Հայրը, մեր Տերը իր օրհնության ներքո անվրդով ու ապահով պահի աշխարհը Հայոց և հավատավոր մեր ժողովրդին... »:



ՆԱՐԵԿԱՎԱԾԻՆ ԱՌԻՍԱՍՏԱՆԻ ԹԵՄԻ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՒՆԻՆԻ ԱՏԵՆՆԵՐԿԵՍ ՆԻԿՈՒՍԱՍ ՔՈՉՅԱՐՏԱՆԸ ՎԵՐԱԹՎՈՒՄԻՆ Է ՆԱՆՁՆՈՒՄ ԹԵՄԻ ՆԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՂԱՎԿԱՎԱԾ ՆԱԿԵՐԸ

ԼԵՍԻՆ ԻՆՏԵՐՆԱԿՆԵՐ  
ՖՈՒՓՈՒՄ ԻՄՊՐԵՍՏՈՒՄ  
ՖՈՒՓՈՒՄ ԻՄՊՐԵՍՏՈՒՄ




«ԻՄԻՏԱՄԱՍՏԱՆԻ ՎԱՅՆԻ ՄԻՆԻՑՈՒՄ»-Ի ԿՐԿՐՈՒՄԻՆ ԿՈՄԻՏԵՍԻ ՎԵՐԻՄՈՒՄԻ ԱՐԴԱՐՈՒՄԻ ԵՎ ԿՐԿՐՈՒՄԻ ԿՈՄԻՏԵՍԻ



ՄԱՅՐ ԱԹՈՒԻ ԲԱՆԵՐԱՆ ՀԱՆՆԱՆ ՎՈՐՈՒՄԹԱՆԸ ԽՆԱԶԻՖ ԻԶԵՔՈՒՄԸ  
ՊԱՏԿԵՐՈՆ ԿՏԱՎ ԻՆ ԵՒԼԻՈՒԴԱՆ ՎԵՂՔՈՒՄ ԴԱՐՆԱԼՆԵՏԻՆ

ՀԱՅԿԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ  
ԳՐԱԳՐԱԿԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ  
ՀԱՅԿԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ



1700-ամսեայի ՆԱՆԴԻՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՏԱԿԱՆ ՆԱԶԱՆՎՈՐՈՂՈՎԻ ՆԱԽԱՅԳԱՆ  
ԽՈՄՐՈՎ, ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ ԵՆՈՐԱՎՎՈՐԱԿԱՆ ԽՈՍՔ ԱՄԵԼԻՍ